ԱՐՑԱԽԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՆՈՐ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24.06.2024 17:41

ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցության շրջանակներում Արցախի փաստաբանների համար կազմակերպվել է վերապատրաստում նոր քրեադատավարական օրենսդրության վերաբերյալ: Դասընթացը վարել է փաստաբան, ի.գ.թ. դոցենտ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի համահեղինակ Դավիթ Մելքոնյանը:

Ներկա են եղել նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը, ԱՀ փաստաբանների պալատի նախագահ Էրիկ Բեգլարյանը, ՀՀ փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ուսումնական դեպարտամենտի ղեկավար Արմինե Ֆանյանը:

Կարևորելով Արցախի փաստաբանների կարողությունների զարգացումը՝ Հայաստանում արդյունավետ գործունեություն իրականացնելու համար, ՀՀ փաստաբանների պալատը՝ գործընկերների հետ համագործակցությամբ,հանձնառու է շարունակել ջանքերը՝ այս ուղղությամբ աշխատանքների շարունակականությունն ապահովելու համար:

Նշենք նաև, որ երկօրյա վերապատրաստումն անցկացվել է Ծաղկաձորում՝ Նիդերլանդների Արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })